ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան, Մամիկոնյանց 46/5

«23» 07 2025 թ. N 178-Լ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 25-Ի ԹԻՎ 135-Լ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հանձնարարում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 25-ի «Հանրային քրեական հետապնդման ենթակա անձը հայտնի չլինելու դեպքերով, ինչպես նաև հանրային քրեական հետապնդման ժամկետները կասեցված քրեական վարույթների նախաքննությունը կազմակերպելու մասին» թիվ 135-Լ հանձնարարականում (այսուհետ՝ հանձնարարական) կատարել հետևյալ լրացումները.

1) հանձնարարականի 1-ին կետի 5-րդ ենթակետում «վարույթ» բառից հետո լրացնել «, բացառությամբ 5.1-ին կետով նախատեսված դեպքերի».

2) հանձնարարականի 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին ենթակետով.

«Սույն հանձնարարականի 5-րդ կետով նախատեսված կարգով՝ դատախազի կողմից հանձնարարությամբ քրեական վարույթը վերադարձվելու դեպքում, երբ

ստորաբաժանման պետի կողմից Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով կամ քննիչի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով սահմանված կարգով առարկություն է ներկայացվել հանձնարարության վերաբերյալ, բացառիկ դեպքերում (հանձնարարությունն ակնհայտորեն դուրս է քննության առարկայի սահմաններից և հանգեցնում է քննիչի արհեստական ծանրաբեռնվածությանը, հանձնարարության մեջ նշված պարզաբանման ենթակա հանգամանքները արդեն իսկ ամրագրված են նորմատիվ իրավական ակտերով) քննիչի կողմից կազմվում է նոր տեղեկանք, որը հաստատում է ստորաբաժանման ղեկավարը և ներկայացվում վերահաստատման՝

ա. Մարզային քննչական վարչությունները՝ տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետին.

բ. Երևան քաղաքի քննչական վարչության ստորաբաժանումները՝ Երևան քաղաքի քննչական վարչության պետին.

գ. Զինվորական քննչական գլխավոր վարչության ստորաբաժանումները՝ զինվորական քննչական գլխավոր վարչության պետի՝ կոնկրետ ստորաբաժանումը համակարգող տեղակալին.

դ. Հատկապես կարևոր գործերով քննության գլխավոր վարչության ստորաբաժանումները՝ հատկապես կարևոր գործերով քննության գլխավոր վարչության պետի տեղակալին.

ե. Տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության ստորաբաժանումները՝ տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության պետին.

զ. Պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության ստորաբաժանումները՝ պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության պետին,

է. Հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչության ստորաբաժանումները՝ հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչության պետին»:

2. Սույն հանձնարարականն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ